ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/6ՏՀ» ծածկագրով գնման ընթացակարգի[1] գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 09.03.2026թ.
ժամը 16:00
ավարտ՝ 30.03.2026թ.
ժամը 10:00

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ) — Նորիկ Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) — Ռիմա Հարությունյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) — Հրանտ Մինասյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) — Լաուրա Գևորգյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) — Գեննադի Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ) — Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/6ՏՀ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին:
3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված պայմաններին համապատասխան լինելու մասին:
5. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին:
6. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

[1] Սույն գնումն իրականացվում է համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 4-րդ մասի, 43-րդ հոդվածի, 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի:

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գները.

Չափաբաժնի		*Չափաբաժնի անվանումը*
համարը	*գնման գինը*	
1	7 936 493	S-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (S-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 4+000-կմ 6+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ
2	13 785 976	S-2-35, /S-2-32/ (Վերին Արտաշատ) - Այգեպատ (S-2-42) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ4+300 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1 Ընթացակարգի հայտերը Armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով բացվել են սահմանված ժամկետում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ 2026 թվականի մարտի 9-ին, ժամը 16:00-ին:

3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

3.1 Սահմանված կարգով ներկայացված հայտերը, որենք ընդունվել են Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի 8-ն են:

3.2 Ընթացակարգի շրջանակներում հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները՝

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«Արխինեքս» ՍՊԸ	Արմավիրի մ., գ. Փարաքար, Արարատյան փ. 19/1 տուն	01249769	archineqs@mail.ru Հեռ. +374 99 559 855
2	«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/6, 27 տարածք	04227903	marketing@seismshin.am Հեռ. 011 778787 033 787887
3	««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	ՀՀ ք. Երևան, Աճառյան 1-ին նրբանցք, 24	01064204	artsakhroad@gmail.com Հեռ. (+37410) 62 87 85, (+37491) 21 92 43
4	«Պիկետաժ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս Վ. Մամիկոնյան փ., շ. 164/39	09219326	piketazh.llc@mail.ru Հեռ. 374 98 099 098
5	«Վերտիկալ» ՍՊԸ	ՀՀ գ.Շիրակի մարզ, գ. Լուսաղբյուր 3-րդ փ., 14տ.	01065215	vertikale.llc@gmail.com Հեռ. +374 (99) 16 58 58
6	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8	08417251	info@haldi.am Հեռ. +374 91 430416
7	«Ռ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ ք, Երևան, Դավթաշեն, Տ.Պետրոսյան փ. 48/7.	01027718	rconsultarm@gmail.com Հեռ.+37494099010
8	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ք. Երևան, Աճառյան 54բ, 375040	00813453	llcdorproject@mail.ru lil.poghosyan17@gmail.com Հեռ. +374 93 08 17 87

5. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան լինելու մասին:

5.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝

«Արխինէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

- Աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունում ներառված Հայկ Ավագյանի ինքնակենսագրականը ներկայացված է 30.03.2025թ. դրությամբ:

«Ռ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

- դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պահանջներին (ձևաչափին) անհամապատասխան:

«Պիկետաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

- դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ մասնավորապես ներկայացված է 2025թ. իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:

«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

- բացակայում է Հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված մասնագիտական փորձառությունը հավաստող տեղեկատվությունը
- բացակայում է Հրավերի 1-ին մասի 2.4 կետի 3-րդ ենթակետով սահմանված աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը:

«Վերտիկալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

- դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ մասնավորապես ներկայացված է 2025թ. իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը
- Աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հրավերի 1-ին մասի 2.4 կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջներին անահամապատասխան՝ աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունում ներառված մասնագետներից Արայիկ Ստեփանյանի, Վահրամ Ահարոնյանի և Մարատ Մուսայելյանի ինքնակենսագրականները և իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու վերաբերյալ գրավոր համաձայնությունները վերջիններիս կողմից հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) Գնահատող հանձնաժողովը որոշեց ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունները՝ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը 26.03.2026թ. մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2) Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել ա.թ. մարտի 30-ին՝ ժամը 9:30-ին:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 5, դեմ-0

6. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

6.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

6.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով գնահատման արդյուքները հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար

6. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

6.1 Ընթացակարգի շրջանակներում յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը .

Չափաբաժին 1: S-2-21,Հ-8 /Մրգավետ/ - Արևշատ (S-2-25) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 4+000-կմ 6+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	«Վերտիկալ ՍՊԸ	1 650 000	330 000	1 980 000
2	«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ	2 100 000	420 000	2 520 000
3	«Արխինէքս» ՍՊԸ	2 400 000	0	2 400 000
4	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	2 500 000	500 000	3 000 000
5	«Պիկետաժ» ՍՊԸ	3 240 000	0	3 240 000
6	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	3 400 000	680 000	4 080 000
7	«Ռ Քոնսալթ » ՍՊԸ	3 750 000	750 000	4 500 000

Չափաբաժին 2: S-2-35, /S-2-32/ (Վերին Արտաշատ) - Այգեպատ (S-2-42) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ4+300 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	3 333 000	666 600	3 999 600
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	3 400 000	680 000	4 080 000
3	«Արխինէքս» ՍՊԸ	3 700 000	0	3 700 000
4	«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ	4 500 000	900 000	5 400 000
5	««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	4 800 000	960 000	5 760 000
6	«Ռ Քոնսալթ» ՍՊԸ	5 412 500	1 082 500	6 495 000
7	«Պիկետաժ» ՍՊԸ	5 450 000	0	5 450 000

6.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

7.1 «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

8.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց և հայտարարեց ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին՝

Չափաբաժին 1

- ընտրված մասնակից՝ **«Վերտիկալ»** ՍՊԸ
- այդպիսին չճանաչված մասնակիցներ՝
    2) «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ
    3) «Արխինէքս» ՍՊԸ
    4) «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
    5) «Պիկետաժ» ՍՊԸ
    6) «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
    7) «Ռ Քոնսալթ » ՍՊԸ

Չափաբաժին 2

- ընտրված մասնակից՝ **Ճաննախագիծ ինստիտուտ»** ՍՊԸ
- այդպիսին չճանաչված մասնակիցներ՝
    2) «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
    3) «Արխինէքս» ՍՊԸ
    4) «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ
    5) ««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ
    6) «Ռ Քոնսալթ» ՍՊԸ
    7) «Պիկետաժ» ՍՊԸ

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

8.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.4 Ընթացակարգի ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

8.5 Պայմանագիր չկնքվելու դեպքում Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրն ու ժամը սահմանել այդ իրադարձության հայտնի լինելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ն:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	Նորիկ Մնոյան	.....
Հանձնաժողովի անդամներ՝	Ռիմա Հարությունյան	.....
	Հրանտ Մինասյան	.....
	Լաուրա Գևորգյան	.....
	Գեննադի Պետրոսյան	.....
Քարտուղար՝	Զանուշ Հայրապետյան	.....